

**ՑԱՆԿ**  
**2013 ԹՎԱԿԱՆԻ ԳԵՐԱԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԻ**

Պատասխանատու մարմինը	Գերակա խնդիրները	Գերակա խնդրի լուծմանն ուղղված քայլերը	Հղումը
<p>ՀՀ տարածքային կառավարման նախարարություն</p>	<p>1. Տեղական ինքնակառավարման մարմիններում պետական մարմինների կողմից իրականացվող ստուգումների /հսկողության, վերահսկողության/ և վարչական հսկողության գործընթացի կանոնակարգում</p>	<p>- Տեղական ինքնակառավարման Եվրոպական Խարտիայի պահանջներին համապատասխանելու նպատակով ՀՀ գործող օրենսդրության վերլուծություն</p>	<p>Տեղական ինքնակառավարման մասին Եվրոպական Խարտիա</p>
		<p>- ՀՀ մարզպետների կողմից տեղական ինքնակառավարման մարմիններում իրականացվող վարչական հսկողության ընթացակարգերի նկարագրում՝ «ՀՀ Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի N 728 հրամանագրում լրացում կատարելու նպատակով» ՀՀ Նախագահի հրամանագրի նախագծի նախապատրաստում:</p>	<p>ՀՀ Սահմանադրության 85-րդ հոդված «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք</p>
	<p>2. Համայնքի զարգացման ծրագրի՝ որպես համայնքի ռազմավարական պլանավորման գլխավոր փաստաթղթի կազմման մեթոդաբանության մշակում:</p>	<p>- միջազգային փորձի ուսումնասիրություն՝ համայնքի զարգացման ծրագրի մշակմանը բնակիչներին մասնակից դարձնելու տեսանկյունից</p>	<p>ՀՀ կառավարության 2012 թ. հունիսի 18-ի N730-Ա որոշում, կետ 3.3.1.2</p>
		<p>- համայնքի զարգացման ծրագրին ներկայացվող պահանջների սահմանում («Տեղական ինքնակառավարման մասին ՀՀ օրենքում»)</p>	
		<p>- համայնքի զարգացման ծրագրի մեթոդական ուղեցույցի մշակում</p>	
	<p>3. ՀՀ համայնքներում գնումների իրականացման գործընթացի կանոնակարգում</p>	<p>-փաստացի վիճակի ուսումնասիրություն և վերլուծություն</p>	<p>ՀՀ կառավարության 2012 թ. հունիսի 18-ի N730-Ա որոշում, կետ 3.3.1.2</p>
	<p>--ուսումնասիրության արդյունքներից բխող իրավական ակտերի ներկայացում</p>		

	<p>4. ՀՀ արխիվային գործի բնագավառում բարեփոխումների իրականացման, այդ թվում արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման հայեցակարգի մշակում</p>	<p>ՀՀ արխիվային գործի բնագավառում բարեփոխությունների իրականացման հայեցակարգը իր մեջ ներառում է հետևյալ քայլերը.</p> <p>ա) «Հայաստանի ազգային արխիվ» ՊՈԱԿ-ի (այսուհետև՝ ՀԱԱ) և նրա տարածքային ստորաբաժանումների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների ծավալի և որակի վերլուծություն, օտարերկրյա արխիվային ծառայությունների կողմից քաղաքացիներին մատուցվող ծառայությունների փորձի ուսումնասիրում;</p> <p>բ) ֆինանսական միջոցների նախնական գնահատում;</p> <p>գ) քաղաքացիներին արխիվային ծառայությունների մատուցման էլեկտրոնային համակարգի ներդրման նպատակով տեխնիկական վերազինման ծրագրի մշակում;</p> <p>դ) ՀԱԱ և նրա տարածքային ստորաբաժանումների կորպորատիվ ցանցի ստեղծում և դրա տրամաբանական միացում այն բոլոր պետական մարմինների ցանցերին, որոնք օգտվում են արխիվային տեղեկատվությունից;</p> <p>ե) սոցիալական ապահովության պետական ծառայության և այլ մարմինների հարցումների միջոցով քաղաքացիների սոցիալ-իրավական բնույթի արխիվային տեղեկությունների (տեղեկանքների) էլեկտրոնային տարբերակի տրամադրման իրականացման իրավական դաշտի սահմանում;</p> <p>զ) ՀԱԱ-ում էլեկտրոնային հարցումները ստացող, մշակող, կատարման համար համապատասխան ստորաբաժանման տրամադրող և պատրաստի պատասխանը հետադարձ հասցեով փոխանցող ստորաբաժանման ստեղծում և արխիվային տեղեկության (այդ թվում միասնական տեղեկության-տեղեկանքի) ստանալու համար դիմումների առցանց՝ ՀԱԱ պաշտոնական վեբ-կայքի միջոցով ներկայացման, այդ թվում նաև էլեկտրոնային վճարման համակարգի ներդրում;</p> <p>է) ՀԱԱ տարածքային ստորաբաժանումների քանակի օպտիմալացում, Երևան քաղաքում մեկ «պատուհանի» սկզբունքի ներդրում:</p>	<p>ՀՀ կառավարության գործունեության ծրագիր, ենթաբաժին 3.3.1.1</p>
--	---	--	--